# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2
# N ԳՀԾՁԲ-20-6/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 24.12.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Ա. Մուրադյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Կատարող» մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 29.11.2019թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-6/1-1 գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 7.10 կետը, ինչպես նաև Պայմանագրին կից 20.02.2020թ. կնքված N1 համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն N2 Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1.Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կարիքը վերանալու պատճառով Պատվիրատուի մոտ անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվազեցնել Պայմանագրով (N1 Համաձայնագրով) նախատեսված ծառայությունների մատուցման համար նախատեսված 5,430,000 ՀՀ դրամ ֆինանսական հատկացումները և առկա է Կատարողի գրավոր համաձայնությունը նշված ֆինանսական միջոցները նվազեցնելու վերաբերյալ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին մասնակի լուծել Պայմանագիրը՝ դրա համար սույն համաձայնագրով սահմանելով նոր №1 և №2 Հավելվածներ: Արդյունքում Պայմանագրի (N1 Համաձայնագրի) ընդհանուր առավելագույն գինը կազմում է 10,770,000 (տասը միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

## 2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով (N1Համաձայնագրով) նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի (N1 Համաձայնագրի) անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Կորյունի 2 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, «Տերյան» մ/ճ |
| Հ/Հ 900011113033 | Հ/Հ 11500166513800 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01503448 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | ռեկտոր |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ |

Հավելված N 1
№ ԳՀԾՁԲ-20-6/1-1 գնման պայմանագրի և
կից կնքված N1 համաձայնագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| Հ/հ | Ծառայության անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 1 | Երիտասարդական հանրակացարանի ծառայություններ, այդ թվում՝ հանրակացարանային բնակտարածքի վարձակալություն | Սովորող կուրսանտներն ապահովվում են հանրակացարանային պայմաններով՝ մեկ սենյակում բնակեցվում են 3 մարդուց ոչ ավելի, մեկ սենյակի ընդհանուր մակերեսը ոչ պակաս քան 18 քառ. մետր: Սենյակները պետք է ապահոված լինեն ապրողների թվին համապատասխան քանակի մահճակալներով, աթոռներով, կողապահարաններով, մեկ գրասեղանով, զգեստապահարանով, կախիչով և հայելիով: Ձմեռային ամիսներին սենյակներում անհրաժեշտ է ապահովել 18 աստիճան C-ից ոչ ցածր ջերմաստիճան: Սանհանգույցները պետք է համապատասխանեն ընդունված սանիտարահիգիենիկ նորմերին: Հանրակացարանը պետք է ապահոված լինի ընթերցասրահով, ինտերնետային կապով (WIFI): Կենցաղային սենյակում պետք է լինի չորանոց, արդուկի սեղան, արդուկ:<br>Հանրակացարանը պետք է ունենա լվացքատուն, սանհանգույց, լվացարան, լոգարան: Հանրակացարանային ավանի տարածքում պետք է լինի սպորտային համալիր՝ ապահոված մարզասարքերով: Հանրակացարանից օգտվող կուրսանտները պետք է ապահովվեն նախաճաշով:<br>Հանրակացարանը պետք է գտնվի Երևան քաղաքում, ծառայության մատուցումը՝ պատվիրատուի կողմից տրված հայտերի համաձայն: |

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

<table>
<tr><th rowspan="3">Հ/հ</th><th rowspan="3">CPV Կոդը</th><th rowspan="3">Ծառայության անվանումը</th><th rowspan="3">Չ/մ</th><th rowspan="3">Քանակը</th><th rowspan="3">Միավորի գինը (ՀՀ դրամ)</th><th colspan="11">Ծառայությունների մատուցումը՝ ըստ 2020թ. եռամսյակների, այդ թվում՝</th><th rowspan="3">Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)</th></tr>
<tr><th colspan="2">1-ին եռամսյակ</th><th colspan="3">2-րդ եռամսյակ</th><th colspan="3">3-րդ եռամսյակ</th><th colspan="3">4-րդ եռամսյակ</th></tr>
<tr><th>Փետրվար</th><th>Մարտ</th><th>Ապրիլ</th><th>Մայիս</th><th>Հունիս</th><th>Հուլիս</th><th>Օգոստոս</th><th>Սեպտեմբեր</th><th>Հոկտեմբեր</th><th>Նոյեմբեր</th><th>Դեկտեմբեր բայց ոչ ուշ քան 20.12.2020թ</th></tr>
<tr><td rowspan="3">1</td><td rowspan="3">55211100/501</td><td>Երիտասարդական հանրակացարանի ծառայություններ, այդ թվում՝</td><td>դրամ</td><td>1</td><td rowspan="3">15,000</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="2">Հանրակացարանային բնակտարածքի վարձակալություն</td><td rowspan="2">Մարդ/ամիս</td><td rowspan="2">718</td><td colspan="2">3,030,000</td><td colspan="3">2,940,000</td><td colspan="3">2,400,000</td><td colspan="3">2,400,000</td><td>10,770,000</td></tr>
<tr><td>134</td><td>68</td><td>66</td><td>65</td><td>65</td><td>64</td><td>47</td><td>49</td><td>50</td><td>55</td><td>55</td><td></td></tr>
<tr><td colspan="6">Ընդամենը</td><td colspan="2">202</td><td colspan="3">196</td><td colspan="3">160</td><td colspan="3">160</td><td></td></tr>
</table>

*Ծառայության մատուցումն՝ ըստ պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

**Հավելված N 2**
**№ ԳՀԾՁԲ-20-6/1-1 գնման պայմանագրի և**
**կից կնքված N1 համաձայնագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ՀՀ դրամ

| Չ/Հ | CPV կոդը | CPV անվանումը | Չ/Մ | Քանակը | **Ընդհանուր առավելագույն գումարը** | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից, ըստ ամիսների, աճողական, ընդ որում՝ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր բայց ոչ ուշ քան 25.12.2020թ |
| 1 | 55211100/501 | Երիտասարդական հանրակացարանի ծառայություններ | դրամ | 1 | 10,770,000 | 2010000 | 3030000 | 4020000 | 4995000 | 5970000 | 6930000 | 7635000 | 8370000 | 9120000 | 9945000 | 10770000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ